

Ճ Շ Մ Ա Ր Ի Տ Ե Ղ Ի Ր

ՀԱՄԱՐՁԱԿԷ՝ ճշմարտութիւնը խօսելու
Մի՛ հոգդ ըներ կշտամբանքէ
Սուտերը երբ կը յայտնուին իբրեւ լոյս
Այտերդ ամօթն պիտի ներկէ ։

Համարձակէ՛ ճշմարտութիւնը խօսելու
Սուտ մը մեղքդ չպիտի ծածկէ
Անոր ձեան պէս ճերմակ դրոշակն պարզէ
Իբրեւ մարդ մի պատերազմէ
Թէեւ աշխարհս քեզ նախատէ ։

Համարձակէ՛ ճշմարտութիւնը խօսելու
Ճշմարտութիւնն միշտ է աղէկն
Ինչ որ ըլլայ կը թեթեւնայ սրահսութիւն
Խոստովանուած ժամանակէն ։

Համարձակէ՛ ճշմարտութիւնը խօսելու
Եւ խրատէ սիրով ընկերդ
Թէեւ պատճառն յանցանքն ծածկելն է մէկուն
Սուտ խօսելու մի մտածեր ։

Համարձակէ՛ ճշմարտութիւնը խօսելու
Թէեւ քեզ ցու իսկ պատճառէ
Ճշմարտութիւնն թէեւ խիստ ալ փորձուի
Պիտ' փաստիկի և պիտ' յաղթէ ։

Համարձակէ՛ ճշմարտութիւնը խօսելու
Արդ գիմարենն աղէկ է
Ապա թէ ոչ յայտնուելով բոլոր քու
Այտերդ ճակատդ պիտի ներկէ ։

Համարձակէ՛ ճշմարտութիւնը խօսելու
Ճշմարտութիւնն ամօթ չ'գիտէ
Մի՛ հոգար ինչ աշխարհս վրադ կը մտածէ
Թող դովէ կամ պարսաւէ ։

Թարգմանեալ
Յովհ. Թ. Տադևաճեան ։

